

ԵՄԱՂԻԿ ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒՄԻ ԴԵՐՔԸ Ե
ՄԱՐԻՆ 50 ԹԻԼ:

Բաժանորդագրին ԿԱՆԻՍԻՆԻ ԹՈՒՐԵՐԻՅ ՀԱՄԱՐ
ապրիլի 50 թիվը: Ուսումնական համար 5 թիվը,
ապրիլի 50 թիվը համար 12 թիվը: — Վերջում
այս և հաջորդող բաժանորդագրողները ևս կ'ըն-
դունան:

Գաւառներէն գրածի տեղ Օսմանեան Նամա-
կագրով ևս կ'ընդունուի:

Միայն երեք թիւ ապուսիկ կը զրկուի, այնու-
հետեւ բաժանորդագրին չը վճարողը կը գաղթի Թերթ
ընդունելէ:

Ծանուցման առջը 3 թիվ:

40 Փարս

ԵՄԱՂԻԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Փառաբանական

40 Փարս

ԵՄԱՂԻԿԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՄԼՆ ԳՐԹԻ ՀԱՄԱՐ ԳԻՏԸ

Առ Տիտղոս Կրիստոսեանի

ՏՈՒՆԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՇԻԱՆ

Կ. Պոլիս, Պաշտօն-Գարու, Թաշ Խան, Թիւ 50:

در علیده بیجه قیوسنده طاش خاندده ۵۰ نوروده

«زاعیک» عزتدسی مدیری یالاقاشیان حوزونان

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien « Dzaghik »

Rue Bahtché-Kapou, Tach Han, 50

CONSTANTINOPLE

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Գ. ՏԱՐԻ. ԹԻՒ 3

ՉՈՐԵՔՇԱՐԹԻ

27 ՏՈՒՆՈՒԱՐ 1893

ԵՄԱՂԻԿԻ ԸՆԹԵՐՑՈՂԱՑ

Տպագրական Տեսչութիւնը 15 օրեայ
դադարման դատապարտեց զՄաղիկ, որ
այսօր վերստին հրապարակ կ'ենէն, դա-
դարման պայմանաժամը լրացնելով:

Մաղիկի դադարման միջոցին փլաւ
նաե թաշ Խանը, ուր կը գտնուէր «Մա-
ղիկ»-ի Խմբագրատունը: Աստուծմէ ե-
ղաւ որ արկածը պատահեցաւ գիշերա-
տեն, խանին մէջ մարդ չգտնուած ժա-
մանակ:

..

Պզտիկ գծադրութիւններ, որոց
պատճառաւ չկրցինք ժամանակին մեր
ընթերցողները շնորհաւորել՝ Նոր Տար-
ւոյն և Ս. Ծննդեան առթիւ: Երկու
խօսքով կ'ուղենք կատարել մեր պարտ-
քը: Չպիտի խօսինք ու չեմք ուղեր խօ-
սիլ վերջացող տարւոյն վրայ: ամբողջ
աշխարհի լրագրութիւնը արտասանեց
արդէն նորա դամբանականը և նորածին
տարւոյն համար ըստ սովորութեան բա-
ղեմագլխութիւններ ըրաւ և յոյսեր ար-
տայայտեց: Մարդիկ, ամէն ժամանակ,
յառաջիկային համար որոշ բան մը չը-
գիտնալով, կը փախաբին միշտ հետըզ-
հետէ աւելի բաղդաւոր վիճակ ու-
նենալ, կը սիրեն հաւատալ որ այն-
պէս պիտի լինի, կը յուսան, և այդ-յոյ-
սքն է որ կը թելադրէ գիշերը իրարու
նկատմամբ մաղթելու ամէն լաւ բաներ,
մասնաւորաբար «առողջութիւն և երկար
կեանք»:

Մենք ալ, ըստ այս տիեզերական
սովորութեան, նոյն բարեմաղթութիւն-
ներն ընելով հանդերձ Մաղիկի ընթեր-
ցողաց, որ և է բարեմաղթութիւն չեմք
ընել իրեն՝ Մաղիկի համար, այսինքն
Մաղիկի ապագայ բարգաւաճման հա-
մար յոյսեր չեմք ուղեր տալ մեր
ընթերցողաց, այլ գիտնալով որ խոս-
տումն աւելի արժէք, աւելի կարե-
ւորութիւն ունի և աւելի արդիւնաւոր
կարող է լինիլ քան յոյսը: Երկուստե-
րու տեղ՝ կը խոստանաւք, կը խոստա-
նամք մեր կողմանէ որ և է աշխատու-
թիւն և զոհողութիւն չինայել Մաղիկի
պարունակութիւնն օր ըստ օրէ առաւել
ևս բարելաւելու, մեր ժողովրդեան պի-
տոյից և զարգացման աստիճանին հա-

մապատասխան վիճակի մէջ դնելու և
միշտ հրահանգիչ, կրթիչ ու ամենայնիւ
օգտակար ընծայելու համար զայն: Եւ
պիտի աշխատիմք պահելու մեր խոս-
տումը:

Բայց որովհետեւ Մաղիկը՝ իբրեւ բա-
րոյակն և մտաւորական հաստատու-
թիւն մը, իբրեւ գաղտնի մեղ չը պատ-
կանիր միայն, այլ ժողովրդեան, որով-
հետեւ՝ կ'ըսեմք՝ ժողովրդեան օգտին
նուիրուած է: Մաղիկի ընթերցողք ալ որք
համակիր են նորա ուղղութեան, որք
օգտակար և կրթիչ կը գտնեն նորա պար-
ունակութիւնը, հանդէպ Մաղիկի պար-
տին միևնոյն որոշումն ընել իրենց մա-
սին, այսինքն հաստատ որոշելու են՝ իւ-
րաքանչիւր ոք իւր կարողութեան համե-
մատ և կրցած, կերպովը՝ աջակցիլ Մա-
ղիկի յառաջացման և զարգացման: Եւ
գիտեմք որ Մաղիկի համակրողք սակա-
ւաթիւ չեն: ապացոյց՝ սկիզբէն մինչև
յայսօր մեղ հասած այն բաղմաթիւնա-
մակներն որոց հեղինակը գոհունակու-
թիւն և շնորհակալութիւն կը յայտնեն
Մաղիկի օգտակար պարունակութեան
համար, և միանգամայն փափաք՝ առա-
ւել ևս բարգաւաճեալ տեսնելու զայն:

Լոկ փափաքը օգուտ չունի, եթէ
փափաքն իրականացընելու համար չաշ-
խատուի: Թո՛ղ չըսեն Մաղիկի բարե-
կամք թէ իրենց ձեռքը ի՞նչ կայ, ի՞նչ
կարող են ընել: Եթէ ոչ ուրիշ բան,
դէ՛թ բան մը կարող են ընել, փոքրիկ
բան մը՝ որ կու տայ ինքնին մեծ ար-
դիւնք: Եթէ իւրաքանչիւր բաժանորդ,
եթէ ոչ աւելի, դէ՛թ մէկ բաժանորդ
ալ ինքը գտնէ, ահա՛ մէկ անգամէն
Մաղիկի բաժանորդաց թիւը կը կրկնա-
պատկի, և այս քիչ կարեւորութիւն ու-
նի միթէ թերթի մը գոյութեան
համար: Իւրաքանչիւր բաժանորդ՝ իւր
կողմանէ բաժանորդ մ'ալ գտնելով, ի-
րաւ է որ մեծ բան մ'ըրած չը լինիր ինք-
նին: Բայց որովհետեւ բոլոր բաժանորդք
նոյնը պիտի ընեն, արդիւնքը կը լինի
զգալի, թերթը յայնժամ կարող կը լի-
նի՝ բարգաւաճ վիճակ մ'ունենալու հա-
մար՝ պէտք եղած ծախքերն ընել, և
ընթերցողք այնուհետեւ իրաւունք կ'ու-
նենան ամէն կարելի եղած բարեփո-
խութիւն պահանջելու Խմբագրութե-
նէն:

Մնաց որ, այդ ինքնին կը լինի ար-
դէն, քանի որ լրագրոյն հրատարակու-
թեան ձեռնարկուած է՝ լոկ ժողովրդե-
ան ծառայելու մտադրութեամբ, և
Խմբագրութիւնը բնականաբար այնքան
աւելի եռանդով կը մղուի կատարելու
իւր պաշտօնը՝ որքան աւելի ընթերցող-
ներ ունենայ, ինչպէս որ քարոզիչը,
բեմադրողը այնքան աւելի ոգևորեալ
կը խօսի որքան աւելի իրեն ունիւղեր-
լու պատրաստ բաղմաթիւն գտնէ, և
ինչպէս որ դերասանն ալ այնքան աւե-
լի լաւ կատարելու կ'աշխատի իւր դե-
րը՝ որքան աւելի լեցուն տեսնէ թատ-
րանը:

Ուրեմն Խմբագրութիւն և ընթերցող
հասարակութիւն պիտի աշխատին միև-
նոյն նպատակին համար, և Մաղիկ պի-
տի հասնի բաղձացեալ վիճակին:

..

Մինչև նոր Խմբագրատան մը կար-
գաւորուիլը, առժամանակեայ կերպիւ
հաստատուած եմք Էսկի-Չապթիյէ փո-
ղոց, Եղըճեան տպարանը, ուր առ-
այժմ կը տպագրուի Մաղիկ՝ մինչև որ
չարաթաթերթիս համար ապստրուած
տառերն ամբողջովին ձուլուին:

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ

Տ. ԳԵՈՐԳ ԲԱՆ. ԱՐԾՐՈՒՆԻ

Նոր Դար պատուական լրագրոյն մէջ կը
կարդամք իւր Կ. Պոլսոյ թղթակցին հետեւ-
եալ գրութիւնը:

Կ. օլսոյ Խառդիւղի Ս. Ստեփան-
նոս եկեղեցւոյ տաղաքահանայն Տ.
Գեորգ Արծրունի, որոյ գրկաց մէջ ա-
ւանդած է իւր հոգին Կ. վարդապետ
Շահնազարեան, և որ այսօր մօտ 110
տարեկան է և անվթար կը պահպանէ իւր
հոգեկան բոլոր կարողութիւններն, եր-
բեմն եկեղեցական հանդիսաւոր արա-
րողութեանց իսկ ներկայ գտնուելով,
ինչպէս որ երկու տարի առաջ իւր հան-
գուցեալ դատեր դամբանական իսկ
ինքն խօսած է քրիստոնէական հաւա-
տոյ խանդավառ ոգևորութեամբ, ուղ-

ղած է առ Ամեն Մեղիսեդեկ Սրբա-
ղան հետեւեալ գիրն, որոյ օրինակն ու-
ղարկելով ներփակեալ խմբագրութեա-
նըդ, հաւատացած եմ, որ մեծ հաճու-
թեամբ պիտի հրատարակէք, անկաս-
կած լինելով թէ ամէն ընթերցողք պի-
տի սքանչանան մեծահաւատ քահանա-
յին աւետարանաշունչ խօսքերուն վրայ:

«Պատուականաց Պատուական Ամե-
նապատիւ Մեղիսեդեկ Սրբազան Տէր և
Հայր մեր հոգեւոր ի ֆրիստոս Յիսուս:

«Հաւատացելոց սիրտը կենդանի Աս-
տուծոյ Տաճարն է», ըստ բանի առա-
քելոյն:

«Մեր անարժանութեան նուէր ըրած
արդիւնաշատ աշխատասիրութիւննիդ
զոր հանապաղ կարգաւով կը մխիթար-
ուիմ հոգեւորապէս, վկայութեամբ
խղճի մտաց իմաց իբրեւ ակներեւ կը տես-
նեմ որ հաւաստապէս արդարութեան
արեգակն ներկայ է միշտ ի սրտի Ձերում
և այս ճշմարիտ լինելուն համար է որ յան-
հունս սուրբ, միշտ կենդանի արեգա-
կան ճառագայթները ակռած էք Ձեր
աշխատասիրեալ մատենին մէջ ի լուսա-
ւորութիւն և ի մխիթարութիւն ամե-
նայն հաւատացելոց որք ընթերցուին
զայս Ձեր Աստուածահաճոյ երկասիրու-
թիւն: Վասն որոյ ի խորոց սրտէ կը մաղ-
թեմ Աստուածաբանական բարութեան
որ շնորհէ երկարութիւն հանրօգուտ
կենաց Ձերոց, որպէս զի յառաջիկայ
կեանս Ձեր սոյն օգտաւէտ աշխատու-
թեան նման մատեններ ի լոյս ածելու
կարող լինիք և որոց փոխարէն հանդերձ-
եալ կենաց մէջ յանհունս վարձատրո-
ղէն ընդունիք զփոխարէնն:

«Մեծամարկամեծար Սրբազնութեան
Ձերոյ խոնարհ ծառայ
ԳԵՈՐԳ ԲԱՆԱՆԱՆԻ

24 նոյեմբ. 92

Խասգիւղ:

Յ. Գ. Անբիծ և սուրբ սիրոյ ապա-
ցոյց պատուական նուէրդ կ'ընթեր-
նում և հոգիս կը զուարթանայ, իսկ
թէ որ Ձեր անձկալի պայծառ և պատ-
կառելի դէմքը տեսնեմ և Ձեր
հետ խօսակից լինիմ, կեանքս պիտի
վերանորոգուի: Սոյն խօսքերը հոգեւոր
խակական ճշմարիտ սիրոյն անփոփոխ
կնիքն են:

Նոյնը:

ՍԱՐԳԻՍ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ

Սրտի դառն անձկութիւն ունեցայ
Սարգիս Կիւլպենկեանի մահուան առ-
թիւ և կը կարծեմ թէ հանրային սուգն
հազիւ եղած է այնքան անկեղծ ու ան-
մխիթար, որքան այս անձին կորուստն
յառաջ բերաւ: Հեղ, խոնարհ, բարե-
համբոյր, անկեղծ ու տառապելոյ
պաշտպան ու կարեկից, բարեպաշտ,
միով բանիւ մին այն լաւագոյն մարդե-
րէն, ընտրեալ քրիստոնեայնէն, որոց

համար Աւետարանն երանի կը կարգայ.
աւասիկ հանգուցելոյն ձիրքերը: Իւր
կենաց գաղտնի գործերն մանաւանդ,
որքան լսած եմ, շարք մ'եղած են բա-
րեգործութեանց, զի հանգուցեալը չէր
սիրեր ի ձայն փողոյ և թմրիկի ողորմա-
ծութիւն ընել, և յայսմ ինքն գրեթէ
բացառութիւն մ'էր մեր հարուստ դա-
սակարգին մէջ: Եղբայրը, օրհնեալ յի-
շատակաց արժանի Սերովբէ Կիւլպենկե-
ան, նոյն ձիրքերով էր զարդարուած,
և Հայերն ամենուրեք այս գերդաստա-
նին օր առօր զարգանալն իրաւամբ
համարած են յաջողութեան դէպք մը
աղքատաց և մասնաւորապէս Աղգային
Հիւանդանոցի պատասպարելոց համար,
որք անվրէպ իրենց բաժինն ունեցած
են այդ յաջողութեան մէջ: Հարուստ-
ները տեսած են թէ ի՞նչպէս լաւ մար-
դիկ կը բարեբարեն, մինչ զի իրենց ձախ
ձեռքն չը գիտեր թէ ի՞նչ կուտայ ա-
ջը: մեր այժմու ընկերային բարոյակա-
նին հետ բաղդատելով, անհաւատալի
կը թուի այս, և ճիշդ ասոր համար ա-
ղէտ մը կը համարիմ ինչպէս բարի ու
հազուադէպ անձնաւորութեանց կո-
րուստը:

Կիւլպենկեան տունն, իբրեւ կարեւո-
րագոյն վաճառական հաստատութիւնն
Թուրքիոյ Հայոց մէջ, ապրուստի և հա-
րըստութեան միջոց մ'եղած է հարիւրա-
ւոր հայ պաշտօնեայնէրու, որք իրենց
հացէն չը զրկուելու համար, ստրուկ և
գձուձ շողջորդութեան դիմելու հարկ
չեն տեսած: — Ո՞րքան բարձրացած պի-
տի լինէր մեր ժողովրդեան բարոյակա-
նի մակարդակն, եթէ ամէն Հայ հա-
րուստներ՝ իրենց պաշտօնէից արժանա-
պատուութիւնը յարգելով, ժրութիւն
և հաւատարմութիւն միայն պահանջէին
անոնցմէ, այն գործոց համար որոց
յատկացուցած են իրենք:

Ամեն Մեղիսեդեկ Սրբազան իւր
դամբանականին մէջ զՍարգիս Կիւլպենկե-
ան նկարագրեց իբրեւ տիպար քրիս-
տոնեայ և Հայ: հազուադէպ է որ մա-
հու առթիւ գովեստն այնքան ճշմար-
տութիւն պարունակէ՝ որքան այս ան-
գամ եղաւ: պակաս իսկ եղաւ: կը յի-
շեմ թէ հարուստ անձ մը 15 օր քարո-
ղել տուաւ ամեն կողմ թէ այս ինչ օր
այս ինչ եկեղեցիին առջև աղքատաց ո-
ղորմութիւն պիտի բաշխէ, և ընդամենը
80 օխա բրինձ նուիրեց... Սարգիս
Կիւլպենկեան ամէն ամիսը կամ երկու
ամիսը մի անգամ Գարակէօմըիւկի եկե-
ղեցին ուխտի կ'երթար և ամէն անգա-
մուն կանոնաւորապէս գանձանակը կը
ձգէր իւր լումայն, տասն և հինգ կամ
քսան ոսկի, և այս այնպէս գաղտնի
կերպով, որ երկար քննութիւններէ յի-
տոյ միայն կարելի եղաւ նուիրատուին
ով լինէին հասկնալ:

Հիւանդանոցի պատասպարեալներն
զուարթ օրեր կ'անցունէին ամէն ան-
գամ որ Կիւլպենկեան ընտանիքին մէջ

տխուր կամ ուրախ հանդէս մը կը կա-
տարուէր: Ժողովուրդը քիչ անգամ լը-
նած է թէ Կիւլպենկեաններն այդ 800
պատասպարելոց ճոխ սեղան տուած են,
բայց ամէն տարի չորս հինգ անգամ կը
պատահէր այն: այդ տեղի որբերը կը
կրեն տակաւին այն զգեստները, զոր
հանգուցեալը վերջին անգամ նուիրած
էր, և երբ կը խորհիմ թէ շատեր կան
որ խունկ ու երկրպագութիւն կը պա-
հանջեն ամենէն, վասն զի կ'ըսուի թէ
մտադիր են օր մը բարեբարել ազգին,
զայրոյթ կ'զգամ: այդպիսեաց վարձքը
կանխիկ հատուցուած կը համարիմ:

Ուրիշ գովելի հանգամանք մ'ալ այս
բարի հանգուցելոյն, իւր եղբոր նման
Կիւլպենկեաններու ամբողջ սերունդին
սրտերուն մէջ զարդայնելն եղած է՝
կարեկցութիւն և սէր դէպ ի դժբաղդ-
ները, հեղութիւն և հանրային գործոց
մէջ անստգիւտ ուղղութիւն:

Կը մաղթեմ որ Նախախնամութիւնն
այսպիսի գերդաստաններ զարթուցանէ
և յաւելու մեր մէջ, որոց վրայ կարե-
նայ հանգչիլ բիւրաւորներու սրտագին
օրհնութիւնը:

Հանգուցելոյն հետ անձնական յա-
րաբերութիւն դրեթէ չեմ ունեցած,
այլ ճանչելով իւր գործոց մի մասը, ար-
դարութեան պարտք համարեցի արժա-
նի մեծարանքս հատուցանել իւր յիշա-
տակին, և այսու ցուցնել որ եթէ դի-
մակաւոր ու ցուցամոլ բարեգործներու
խիստ քննադատ մ'եմ, պատճառը ան-
կեղծ ու հաւատով բարեգործները մի-
այն գնահատելու բաղձանքս է: Ս.

Ծաղիկ սովոր չէ դրուատալից գրու-
թիւններ հրատարակել կենդանի կամ
մեռեալ մեծատանց մասին, բայց Կիւլ-
պենկեան Սարգիս Եֆէնտիի յիշատակին
նուիրեալ և անկեղծ սրտէ բղխած այս
տողերը կը հրատարակէ սիրայօժար և
մեծ հաճութեամբ, իրենց անթիւ բա-
րեբարութեանց և քրիստոնեայնել ա-
ռաքինութեանց համար պատմութեան
մէջ իրաւամբ յիշատակելի համարելով
հանգուցեալ Սերովբէ և Սարգիս եղ-
բայր և Կիւլպենկեան ամբողջ գերդաս-
տանին անունն:

Ծաղիկ այս տողերու վրայ աւե-
լորդ համարելով խօսք աւելցնել,
կը մաղթէ միայն որ Կիւլպենկեան ա-
ռաքինազարդ տունն իւր բաղմաթիւ
հետեւողներն ունենայ մեր մեծատանց
մէջ, որով և մեր կրօնական, կրթական
և բարեգործական հաստատութիւնք
հանապաղ ենթակայ մեան նոցա հոգա-
ծու խնամոց, իրենց կարգին լի ու լի
կարենալ գոհացնելու համար մեր Ժո-
ղովրդեան սոյն կարգի կարօտութիւն-
ներն:

ՁԲԱՆԻԻ

Երբ բռնակի խոտ մեջ ձորերուն,
Այգեստաններն ծածկէ գարուն,
Ծաղկի ծըլի ծառ կարմրագոյն,
Զրանիսն ալ մամռոտ
Լըսել կուտայ իւր ճրագը ուն
Զայնիկը կարօտ:

Տատանելով կ'ելլեն դար վեր
Իր շար ի շար հընչուն դոյլեր
Կը հոսնուն շուրն տարուբեր՝
Կ'իջնեն հօրին տակ:
Ձին գանոնք ցունց կուտայ երբ տերն
Կը շարժէ մըտրակ:

Կը յորդէ շուրն արեւափայլ
Ակօսներուն մեջ քըխացեալ,
Քովը կեցած հողագործն ալ
Կը վարէ բահով:
Կ'ոռոգանէ բազմածառալ
Արտերը լիով:

Հովինն ու հօտ դաշտին ելած
Ու կը մնան բախտաւայած
Պան մը մեջ շըրին մըշտախաղաց,
Սայերն կը կայնին:
Ձանգակեալ եզն եւ եզնարած
Միտ կուտան ձայնին:

Ան դաշտերուն կուտայ խընդում,
Քըրտնոտ մըշակն, աջը տըրտում,
Լսելով անոր ձայնը անհատնում
Կը ստանայ խրախոյս:
Շըրջմանցը հետ ժամեր բազում
Արագ կու տան խոյս:

Մինչեւ որ գուարք աշունը գայ
Եւ ծածանին արտերն ոսկեայ,
Պըտողով ճըղիկն ալ կորանայ
Հօտն իջնայ բըլրէ:
Խեղճ մըշակին սիրտն որ ցընծայ՝
Զրանիսն կը լուէ:

ՎԱՐՄԱՍ ՍԱՄՔԵԱՆ

ԳԱԽԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՂՆԻՍԱ, 1893 Յունուար 1.— Մեր
նորակազմ թաղական Խորհուրդը բար-
ւոյ տնօրինութիւն մ'ըրած եղաւ՝ ու-
սում առած և ուսումնասէր երիտա-
սարդներէ կազմուով վարժարանաց Հո-
գաբարձութիւնը, որ տարեգլխէն գոր-
ծի պիտի սկսի, և որ կարող է բարե-
կարգել վարժարանները, երբ քաջալեր-
ուի պաշտօնական մարմիններէ և ժողո-
վըրդէն: Կարողութիւն և յաջողութիւն
կը մաղթեմ, և եթէ ընելիք առաջար-
կութիւն մ'ունիմ, այն ալ հիմնական
բարեփոխութիւնն է, վասն զի առանց ա-
նոր կարելի չէ արդիւնաւոր ընել տըր-
ուած աշխատութիւնները: Այո՛, պէտք
է հիմնական բարեփոխութիւն մտցնել
մեր վարժարանաց մէջ և անարժան
պաշտօնէից տեղ դնել արժանաւորնե-
րը: Պէտք է մասնաւոր ուշադրութիւն
դարձնել Աղջկանց վարժարանին և ըն-

տելարանին: Յուսանք և սպասենք:
Տօնի օրերը մօտեցած են. եկեղեցի
յաճախողներու թիւը նուազած է, վասն
զի քարոզ չկայ, անդարար քարոզ: Օ-
ղին ու գինին տիրած է ամէն տուններու
մէջ, փաստակար սովորութիւն մ'որ կըր-
նայ վերցուիլ քարոզութեամբ, և՛ առ
ի չդոյն քարոզի՝ կրնայ առաւել ևս ար-
մատանալ: Ժողովրդեան առաջնորդը,
հովիւը քանի որ կը խմէ, կ'արեւնայ,
ժողովուրդը ի՞նչ կը սովորի: Մեր քա-
հանայից մեծ թերութիւններէն մին այն
է որ բարի օրինակ չեն լինիր ժողովրդե-
եան: Որով կ'ըսէ Պօղոս առաքեալ թէ-
քանի որ միս ուտելով եղբայրս պիտի
գայթակղի, յաւիտեան չեմ ուտեր:
Տէրտէրը միջնորդ մ'է՝ ժողովուրդը ե-
կեղեցւոյն հետ կապող. եթէ չունի այդ
միջնորդութեան յատկութիւնները և
զուրկ է ամէն բարեմասնութիւններէ,
ի՞նչ կը լինի ժողովրդեան վիճակը: Կը
հաւատամք որ մեր թաղական Խորհուր-
դն այս մասին օգտակար տնօրինու-
թիւն մը պիտի ընէ, բերել տալով լաւ
քարոզիչ քահանայ մը:

15—20 օրէ ի վեր շարունակ տեղա-
ցող անձրևք մեծ օգուտ տուին այգի-
ներուն, և պղտիկ փառներ ալ պատ-
ճառեցին, գետեղերեայ ցորեններն աւ-
րելով:

Շ. ԳԱՐԱՆԻՍԻԱՆ ԷՆ ԳԵԿՈՒ 5 ամա-
թուով Մ. Էֆ. Բժշկեան կը գրէ մեզ.
«Բիւնկեանցի Տօքթ. Գէորգ Պէկեան,
երբեմն Թաղապետական բժիշկ Կարնոյ
և այժմ տեղւոյս Լիճէսէի անգլիական
ընկերութեան բանեցուցած հանքին մէջ
բժշկութեան պաշտօն ստանձնած էր,
հազիւ 4—5 օր իւր պաշտօնը վարեց, և
ահա՛ տիգանքերի հիւանդութեամբ 18
օրեր տառապելէ վերջ, հակառակ բը-
ժշկական խնամոյց՝ նոյ. 16 ին քաղա-
քին մէջ իւր մահկանացուն կնքեց ի
հասակի 42 ամաց:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԷՆ

— Ի Բագու, Աղաբաբա Լալայեան ա-
նուն մէկը վախճանելով 34 տարեկան,
կտակեր է 5000 ռուբլի Շամախու հին
փակուած եկեղեցին նորոգելու համար,
և 2000 ռուբլի՝ տոկոսով Շամախու երկ-
սեռ դպրոցներու մէջ որդեգիրներ պա-
հելու համար:

— Ի ՍՈՒՉՈՒՍ (Աւստրիա), նոյ. 30 ին
սիրուն նուագահանդէս մը տեղի ունե-
ցեր է Հայոց դպրոցի մեծ սրահին մէջ,
բանաստեղծ Գամառ-Քաթիպայի յիշա-
տակին, նախաձեռնութեամբ Պ. Ռ. Բ. ի
և գործակցութեամբ երիտասարդաց և
օրիորդաց: Ներկայ գտնուելը են Սու-
չաւայի և շրջակայ գեղերու բոլոր Հայք:
Պարոն Ռ. Բ. բանախօսեր և համառօ-
տիւ ներկայացուցեր է Պատկանեանի և
ուրիշ բանաստեղծներու կեանքը: Խիստ

քաղցր և հաճոյալիւ երգեր են յաջորդա-
բար Օր. Գաթէրինա Թէոդորովիչ, Օր.
Հովսիսիմէ Ալան, տիկին Աննա Հասուն-
եան, Օրիորդ Սոֆի Թէոդորովիչ: Եր-
գերէ նաև Պարոն Ռ. Բ. Կէս գիշերէն
յետոյ տեղի ունեցեր է պարահանդէս:
Հանդիսին զուտ հասոյթը պիտի յատ-
կացուի եղեր՝ բանաստեղծին ընտան-
եաց ինպատակ հրատարակելի գրքի մը
ծախքերուն: Ի մտոյ պիտի ձեռնար-
կուի եղեր մի երկրորդ նուագահան-
դիսի կազմակերպութեան:

— Արիստակէս եպիս. Սեդրակեան
հրաժարեր է կ'ըսուի Ս. Էջմիածնայ Սի-
նոգի անդամակցութենէն:

— Ի Վարչաւիա (Աւստրիա) այժմ
կայ եղեր 100 տուն Հայ ժողովուրդ,
առանց քահանայի և առանց եկեղեց-
ւոյ, այնպէս որ ծնունդ և մկրտութիւն
յաճախ կատարել կուտան եղեր օտար
եկեղեցականի ձեռքով:

— Արարատէն. — «Հանգուցեալ Մի-
քայէլ Խան-Աղեան Ձալաթղեցի, իւր
կենդանութեան ժամանակ արած կտա-
կով պարտաւորացրել է իւր հարազատ
եղբայր աստիճանաւոր Գէորգ Խանադ-
եանցին՝ ի յիշատակ իւր և իւր հան-
գուցեալ կին Հեղինէի՝ 1200 ռուբլի
բաժանել հետեւեալ կերպով. 250
ռուբլի մեծ Ղարաքիլիսի մէջ իւր հիմ-
նած դպրոցին, 100 ռ. Համամու գիւղի
դպրոցին, 140 ռ. Ձալաթղի գիւղի Ս.
Աստուածածին եկեղեցւուն, 100 ռ. Ս.
Սարգիս եկեղեցւոյն, իսկ 600 ռուբլին
բաժանել իւր հին չքաւոր ծառաներին
և որոց արժան կը դատէ հանգուցելոյն
եղբայրը: Այս մասին հանգուցելոյ եղ-
բայրը Պ. Գէորգ Խան-Աղեանը տեղե-
կութիւն տալով Ամեն Տէր Տեղակալին,
յայտնում է իւր պատրաստականու-
թիւնը իւր եղբոր կտակը ճշգրտութեամբ
կատարելու: Տէր լուսաւորեսցէ հոգի
հանգուցելոյն Միքայէլի և իւր ամուսին
Հեղինէի:»

— Նոր-Գարէն կը քաղեմք հետեւ-
եալները:

Էջմիածնի մեզ գրում են. — «Կի-
րակի նոյ. 29 ին, Մայր տաճարում Ս.
Պատարագին երգում էր Կարա Մուր-
ղայի զեկավարութեամբ՝ նրա պատրաս-
տած երգեցիկ խումբը: Բաւական չա-
փով հետաքրքիր բաղմութիւն էր եկել
տաճարը՝ լսելու այս նոր տեսակի եր-
գեցողութիւնը, և դուրս եկաւ դժգոհ:
Կարա-Մուրղան հանգուցեալ թաշճեանի
երգեցողութեան եղանակը քառաձայնի
էր վերածել, բայց անճաշակ կերպով և
հակառակ Հայաստանեայց եկեղեցւոյ
երգեցողութեան հօգույն, այնպէս որ
տպաւորութիւնը խիստ ծանր էր: Այս-
պէս, «Լցաք ի բարութեանց»ի եղանա-
կը՝ որ Հայի համար արմատական և ան-
փոփոխելի դարձած է, երգւում է իւր
քայլերդ: Կարա-Մուրղան Հայոց եղանակին
անտեղեակ, ինքն էլ մի ինքնուս երա-
ժիշտ, ամէն երգի մէջ իւր քայլերդի ե-
ղանակն ունի ի նկատի:

ՇԱՐ

ՀԱՅ ԿԵՆՍԱԳՐԱԻԹԵԱՆՅ

ԺԱ.

ՄԵԾ—ԱՊՐՈ ԶԵԼԵՊԻ

(Շար. Գալստիոյ քիւն)

Շարունակեմք:

Կրէտէն շատեր գաղթեցին 'ի Հնդկաստան' կրկնեան մականունը պահելով: Աստուծոյ մանց՝ յանուն Ս. Եղիշիմիայ եւ Ս. Նրոնաղիմայ ըրած կտակները կը յիշէ մեր Կրէտական վերջին այցելու-Հովիւն: Ապրո-ձէլէպի 'ի Կրէտէն ըրած գործերն թուեցինք: Նորա ժամանակակից է Շահին-ձէլէպին՝ որ ծնած ու սնած է 'ի Կրէտէն: Նոյնպէս, Կատա-ձէլէպին՝ որ Կարապետի աղաւաղումն է, մեծ պապն է կ'ըսուի այն Խուլ-Սիմոնին՝ որ մինչեւ վերջի ժամանակներս տեղւոյն ազգ. կալուածոց միաբնակիւն կը համարուէր:

Շահին ու Կատա-ձէլէպիք, մտերիմներն Ապրո-ձէլէպիի, չինեւ տուած են Կրէտէի եկեղեցւոյն երկու կողմի մատուցներն կամ պահարաններն, ու եկեղեցւոյն յարակից սենեակները, գնած են նաեւ յանուն եկեղեցւոյն կալուածներ, և այսպէս՝ Կրէտէի Ս. Կարապետ եկեղեցին, իւր բոլոր շրջակայ տեղերով՝ ազգային սեպակահանութեան վերածած են:

Նրբ Շահին և Կատա ձէլէպիք կը վախճանին, սոցա պայագառք կը հսկեն եկեղեցւոյն, և ամենայնիւ կը մատակարարեն զայն:

Շահին-ձէլէպիի որդին՝ Ստեփան, թէեւ 'ի Կրէտէն ծնած ու սնած, բայց Կրէտէի չին պատերազմին ժամանակ 'ի Պոլիս գաղթած է, և իւր գաւակներով՝ յենիգարու տեղաւորուած:

Սոյն Շահին-օղլու ըսուած Ստեփանը՝ երկայնակատակ, թխաղէմ, կայտառ և հրկայ անձ մ'էր: Գլուխը խոշոր խավուխ մը կը դնէր, երկայն վերարկու և ներքեւէն պիւնիք, այսինքն, այն ատենուան տարազը կը հագնէր, և այն աստիճան պատկառելի և ազգեցիկ դարձած էր իւր բնակած թաղին մէջ՝ որ տեղւոյն հին կրակէն առաջ, բոլոր խանութպանք յոտին կանգնած կը բարեւեն եղբր զինքը, իրարու խմաց առնով Կիրիլի-Ստեփանին գալը: Կարեւոր գլխք մը ունէր նաև թէ՛ կառավարութեան տոջեւ և թէ՛ Ազգ. Պատրիարքարանի Մերակոյտի ժողովոյն անդէս: Վախճանած է ալէգարդ հասակին մէջ, Զաքարիա Պատրիարքին օրով, և դամբանականն արտասանած է՝ Նորին Սրբազնութիւնը, գրուատելով Ստեփանի բարեգործութիւնները:

Շահինեան Ստեփան թողած էր Կարապետ անուն մանչ զուակ մը, և չորս աղջիկներ: Կարապետ և Մարիամ ծնած էին 'ի Կրէտէն, ինչպէս Էլմաս և Ֆուլիկ աղջիկներն ծնած էին 'ի Պոլիս:

Կարապետ՝ շնորհիւ իւր մեծանուն հօր, բաւակա չ. դիքք մը ունեցած էր՝ իւր ասաղձադ օրծական ժամանակաշրջանի արհեստին մէջ, և ընկերակցութիւն կ'ընէր Յրէնիկեան Մկրտիչ աղայի հետ, որ ցարդ կենդանի է: Ազգային պաշտօններու մէջ եւս գտնուած է մինչեւ թագթագեան Պօղոս պատրիարքին ժամանակ:

Կրէտէի տուածէն յետոյ, Պօղոս Պատ-

րիարք՝ Կարապետին ձեռք բերել կու տայ Գանախայէն Ս. Կարապետ եկեղեցւոյն անօթներն եւ այլ իրերը:

Կարապետ՝ անձամբ երթալով 'ի Կրէտէն մեծ որդւոյն Յովհաննէսի հետ, Պոլիս կը բերէ եկեղեցւոյն անօթները, ձեռագիր Յայտմառքք մը, գրչագիր մագաղաղեայ Աւետարաններ, սկիզներ, խաչեր, բուրվառներ, քրչներ, ժամարարի գգեատներ, և Ս. Աստուածածնայ սքանչելի փոքրագիր համակ արծաթադրատ պատկեր մը, որ այլ եւայլ կողմերէ գիտուելով՝ տարբեր տարբեր պատկերներ կը ներկայացնէ, զոր օրինակ՝ մէկ կողմէն՝ Աստուածամկայ, միւս կողմէն՝ Խաչերութեան, և ուրիշ կողմէն՝ Յովսէփ Արիմարացւոյն խաչէն վար ստեղծուն կերպը:

Սոյն անօթք՝ Պօղոս Պատրիարքի ժամանակ, լուսարարապետ Տէր Սուքիաս Աւագ քահանային յանձնուած են:

Կարապետ՝ եկեղեցւոյ անօթներուն հետ 'ի միտին Պօլիս բերած է՝ Կրէտէի Տ. Կարապետ քահանայն, որ իւր ընտանեօք 'ի Գարակեօմիլիք հաստատուելով վախճանած է:

Իսկ Միքիլիկի Խուլ-Սիմոնը, հանդերձ ընտանեօք, յիշեալ Կարապետին տունը հիւրասիրուած է, և յետոյ վերադարձած է 'ի Կրէտէն, որ ագարակներու տէր եղած, և աղջիկներն՝ առ 'ի չգոյէ՝ Հայ բնակչաց, Յոյներու հետ ամուսնացուցած է:

Կարապետ՝ 20 տարիներ առաջ յիւսկիւտար մեռած և թաղուած է: Կամբանականը խօսած է Իշմիրեան վարդ. (այժմ եւ պիտկոյոս):

Իսկ Ստեփանի աղջիկները՝ Մարիամ և Ֆուլիկ, որ յենիգարու կը բնակէին, թաղուած են 'ի Պալադիլ, իսկ փոքրիկ աղջիկն՝ Էլմաս, 78 տարեկան հասակին մէջ մեռած է 'ի Գատըգիլ, երկու տարի առաջ, եւ թաղուած է անդ, թողնով յիշատակ մը Կրէտացի հին սերունդէ որդի մը՝ որ է աղւոյն Տ. Խոսրով քահանայն, և ուրիշ երեք գաւակներ:

Իսկ Կարապետի որդիքն են՝ Յովհաննէս՝ Մկրտիչ և Սթանագիլէ, որ իրենց հօրը՝ ատաղձագործ՝ արհեստը կը շարունակեն յիւսկիւտար, եւ Կիրիլոյի Շահինեան կը յորջորջուին:

Այժմ վերջացած կրնայ համարուիլ Կրէտէի Հայ գաղթականութիւնը, որուն համար թէեւ ըսինք թէ՛ Վենետիկէն փոխադրուած է 1666ին, բայց կարծիք կայ նաեւ թէ՛ Կրէտէի ամենահին գաղթականութիւնը կ'սկսի 10րդ դարէն, եւ կ'զարգէր արեւտուրով՝ Կիրիլոյի եւ Կիրալոսի հետ:

Բովմէլի գրեթէ բոլոր եկեղեցեաց Ս. Գրքերուն և օծեալ պատկերներուն վրայ կը գտնուի Ապրո-ձէլէպի անմահ անուան յիշատակութիւնը:

Սոյն մեծանուն ազգայինը՝ ծանրագին անօթներով, սպաննելով և իրեղններով օծաած ու զարդարած է իւր գնած ու չինած եկեղեցիներն, և մեծադիր ոսկի և արծաթ խաչեր նուիրած է, որք տակաւին իրենց յիշատակարաններով կը մնան աստ և անդ, ինչպէս Սիւրիքի եկեղեցւոյն, որ կրնայ մշտաբարբառ վկայներէն մին հանդիսանալ: Այդ պատմական եկեղեցւոյն մէջ գեռ կան ու կը մնան աղնուատիւմ Զէլէպիին քանի մը տող ձեռագիրը կրող տպեալ գրքերն, 'ի յաւերժական յիշատակ

Ապրոյեան գերդաստանի մեծ հիմնադիրներէն միոյն:

Ապրո-ձէլէպի՝ իւր ծննդավայր Զմիւռնիայէն զատ 'ի Պրուսա, 'ի Մալթա, և 'ի Պոլիս մնալով՝ բարեգործական յիշատակներ թողած է՝ այլ և այլ պարագայից մէջ:

Պրուսայու արդի եկեղեցւոյն ընդարձակ տեղւոյն(1) վրայ՝ Ս. Աստուածածնայ տաճարին նախկին փառաւոր շինութիւնը՝ թէեւ ոմանք սխալմամբ Միքայեան Մանուկ Պէյին վերագրած են, բայց Ապրո-ձէլէպին չինեւ տուած է զայն՝ բարձրագիտակ գետնի մը վրայ, գեղեցիկ պարտիզով շրջապատեալ: Ապրո-ձէլէպին եկեղեցւոյն հողերն Նրոնաղիմայ վազքն ըրած է, կ'ըսեն, 125 կոտոր ուրիշ միւլք հողերու հետ միասին:

*

Ապրո-ձէլէպին չինեւ տուած է նաև 'ի Վ. Պոլիս, Ս. Նիկողայոսի պատմական եկեղեցին:

Հին ատեն՝ 'ի մայրաքաղաքիս Ս. Նիկողայոս անուամբ տարբեր թաղերու մէջ երկու եկեղեցիներ ունէինք, ինչպէս այսօր՝ 'ի Պէյքօզ և 'ի Խօփ-գարու թաղը՝ համանուն զոյգ մը եկեղեցիներ ունինք:

Նախկին Ս. Նիկողայոս եկեղեցիներէն մին՝ մերձ Խալիքէ դրան, կամ 'ի Գարակեօմիլի թաղն, և կամ լաւ ևս, Զարչապա-Օտալարին մօտիկ կը գտնուէր, և Հայոց ամենէն հին եկեղեցիներէն մին համարուած, ու Քէֆէցի Հայ վաճառականի մը նուիրատուութեամբ կառուցուելուն համար 1625ին՝ «Քէֆէլի-Եկեղեցի» ըսուած էր սոյն եկեղեցւոյն վերաբերեալ ձեռագիր յիշատակարաններ կարգացած եմ թէ՛ Պալատու թաղին մէջ, և թէ՛ չեմ յիշեր ո'ւր տեղ:

Կառանդուի թէ՛ այդ եկեղեցին ընդարձակ պարտիզ և դերեղմանատուն ունեցած է, որոյ մէկ մասն Հայոց, և միւսը Վատինացւոյ կը վերաբերի եղբր:

Սոյն Ս. Նիկողայոս, որոյ երեք խորանաց տեղերն տակաւին կանգուն կը մնան, ունէր կից բնակարան կամ վանատուն, որ կը կոչուէր «տուն Նրոնաղիմի», կամ Իջեանատեղի պատրիարքաց և միաբնաց Նրոնաղիմի:

Հետեւաբար, նախկին Նրոնաղիմատունը 'ի Գարակեօմիլի կ'ըսուէր, ապա փոխադրուած՝ յիւսկիւտար, և վերջապէս 'ի Պոլիս, այժմու Նրոնաղիմատունը:

Նախկին Նրոնաղիմատուն մէջ՝ 1626ին իջեանած է Պոլիս եկած ժամանակ՝ Նրոնաղիմայ ամենէն արդիւնաւոր նկատուած Գրիգոր Պարոն-Տէր Պատրիարքն, և նկատելով Նորին Սրբազնութիւնը՝ որ այդ հաստատեալ շէնքն անբաւական է պատասխարելու զինքն իւրայիններովն համդերձ, գընած է նաև Ս. Նիկողայոսին յարակից երեւելի անձի մը տունը, և խառնած է Նրոնաղիմատանը հետ, որ ընդարձակագոյն հաստատութիւն մը դարձած է յայնժամ:

Իսկ երկրորդ Ս. Նիկողայոսի եկեղեցին է՝ 'ի Վլանկա թաղն կամ 'ի Մուսալլա հաստատուածը, զոր Ապրո-ձէլէպի վայելուչ

(1) Պրուսայի հին եկեղեցին (Ս. Գէորգ) Սթ-Պաշի ըսուած թաղին մէջ էր, և որոյ մի ոսկի Սկիւր 450էն աւելի տարիներու յիշատակաց տրձտնագրութիւնը կը կրէ:

Ս. Քէթրք եկեղեցին այժմ ոչ ևս է:

քան դառալինն կանգնած կամ վերաշինած է 1661—62ին(1), որ այրացաւեր եղած էր Լանկայու Պրոսպար-քիլիսէսի ըստած Ս. Սարգիս(2) եկեղեցւոյն և Յուշաց եօթն եկեղեցեաց հետ՝ 1660ի համաճարակ հրդեհէի ժամանակ։ Ասորո-2էլէսի այս Ս. Նիկողայոս եկեղեցւոյ վերաբերող ծուխերէն մէկն էր, և բնակարանն ալ հաստատած էր Լանկայի թաղը։

Թէ՛ Ս. Նիկողայոսի եկեղեցին, և թէ՛ Ս. Սարգիս եկեղեցին, 1659ին, ժամանակակից պատրիարքական խնդրոց մէջ ոչ նուազ մասնակցութիւններ ունեցած են։

Մինչև մեր ժամանակները՝ Զինկի-բաղ-նիքի շրջակայքը՝ Ս. Նիկողայոսի փողոց կ'ըսուէր, և 1866ի հրդեհէին աւերակ դարձաւ։

1567ին, յաւուրս Կաթողիկոսութեան Միքայէլի, և ի Պատրիարքութեան Առաջնոյն-Յակոբայ Կ. Պոլսոյ, ուսումնասէր աղ-գայինք փախաւքած են որ տպարան մը հիմ-նեն Ս. Նիկողայոսի հովանաւորութեան տակ, և Արքար անունով մէկը՝ լազարոս աշխատանք կը յաջողի զիր փորագրել։ Զեռնառ կը լինին Արքարու՝ խորվիրապե-ցի Առաքել արեղայն, Անտօնիոս-սարկա-ւադ և Յովսէփ-գալիւր։ Այս չորսն միանալով կը պատրաստեն տպարանի վերաբերեալ ի-րեղէնները և առաջին անգամ Կ. Պոլսոյ մէջ տպարան մը հիմնելով՝ 1567ին Ալբրե-նարտն մը կը տպեն, և յաջորդ տարին ալ Տօնացոյցը, Կ'ըսուի թէ՛ Ռոկերբանի թարգ-մանութիւնն ալ առաջին անգամ սոյն տը-պարանէն ի լոյս եկած է։

Սոյն արդիւնաւոր տպարանին տառերն թէ՛ հետզհետէ պիտի կատարեւորործուին եղեր, լոյս լազարոս հրդեհէն գալով՝ ա-մենայն ինչ ընալինջ ըրած է։

Լանկայու Ս. Նիկողայոս եկեղեցին այն-չափ ժողովրդական համբաւ կը վայելէր, որ օտարազգիք իսկ՝ իրենց պահետի դրամ-ներն այդ եկեղեցւոյն կը տանին կը յանձ-նեն եղեր՝ ի շահագործութիւն կամ յա-ւանդ։

Զեռ յիշեր, ինչ անունով քահանայ մը կայ եղեր այդ եկեղեցին, որ աւանդեալ գրամներով՝ ժամանակին մեծ գերեր կա-տարած է։

Այդ եկեղեցւոյն գլխաւոր ծուխերն կամ մատակարարներն եղած են՝ Մուսալլայի Հաճի-Մարտիրոսի, կամ որ նոյն է, Արմը-

(1) Այդ միջոցին Այնթապցի Նզիադար Կաթողիկոսն ալ մայրաքաղաքս կը գտնուէր։

(2) Ս. Սարգիս եկեղեցին՝ որ այժմ ոչ ևս է, կը գտնուէր Պոլսոյ Հիսար-Տիպի թա-ղը, դէպ ի Նէնի-Փարու, Արապօղլուէնց տանը հանդէպ, երբեմն տպագրիչ Գիւրք-ճեան Ռուբէն աղայի տան քարուկիւր շէն-քէն մէջ, որոյ հինաւորց ստորերկրային շէ-նքարձակ և կամարակապ շէնքին մէկ մասը կը մնայ տակաւին։

Այս եկեղեցին՝ Պրոսպայէն ի մայրաքա-ղաքս եկող Հայ դաղթականաց կառուցածն լինելուն՝ Պրոսպար-քիլիսէսի յորջործուէր է, և որոյ մէջ գալուսթիւն ընող հացադործ պատանի մը՝ Սուլթան Իպրահիմայ թաղա-ւորութեան վերջին օրերէն սկսեալ մինչև Գ. Սուլթան Մէհմէտի չորեքտասանե-րորդ տարին՝ Կ. Պոլսոյ մէջ տեղի ունեցած ժամանակակից անցքերն ու դէպքերն ըն-դարձակօրէն նկարագրուած է։ Այս ձեռա-գիր աշխատած էր Սամաթիոյ Ս. Սահակեան գարժարանի հին թանգարանին մէջ։

տանցի Զաքար աղային փուռին նահապետ-ները։

Սերաստացի Սոյ թորոս Կաթողիկոսն, ՌՃԶ-ին ապրիլ ամսոյ վերջին եօթնեկին, չորեքշաբթի օր մը, Լանկայու սոյն Ս. Նի-կողայոս եկեղեցին կուգայ Պալատէն նա-ւով և ի պահու առաւօտեան ժամերգու-թեան, երբ «Փառք ի փարձուն» կ'եր-գէին, յանկարծ կ'աւանդէ հողին առ Աստ-ուած։

(Շարունակելի)

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

ՀՈՂԸ ԵՒ ՀՈՂԱԳՈՐԾԸ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՐԱՆԱՆԳՆԵՐ

Քանի մը նշանաւոր հողագործներու գը-րած հողագործութեան Գործնական Հրա-հանգներէն կարեւոր էր համարիմ քաղել այն մասերն որ յատուկ են բարեխառն կլիմայի, ինչպէս է նաև մեր երկիրն։

Այս հրահանգներ քանիցս փորձուած և լաւ արդիւնքները տեսնուած են։ Այսու հանգերձ, կրնան դառնալ բաներ՝ որք թէ՛ հոս յունուարի մէջ կը ցանուին՝ դեկ-տեմբերի կամ փետրուարի մասին մէջ նշա-նակուած ըլլան։ այս կարգի հրահանգներն պէտք չէ սխալ համարուին՝ ի նկատ առնե-լով տեղ տեղ կլիմայից փոփոխութիւնները։ Լաւ է որ աւանդութիւնը և այս գրուածն ի միասին փորձուին մեր գաւառաց մէջ և երկուքէն լաւագոյնը ընտրուի։

Հողը եւ հողագործը «Փաղիկի» Պոլսոյ ըն-թերցողաց համար ալ գիտական գրօսանք մը թող ըլլայ, անմեղ գրօսանք մը։ աշ-խարհի վրայ հողագործութենէ աւելի ան-մեղ աշխատութիւն մը չը կայ կարծեմ։ ով որ պարտէզ մ'ունի, թո՛ղ ծառ մը, և ո՛վ որ ափ մը հող, թո՛ղ ծաղիկ մը տնկէ։ Մարդ 10 փարայով ծաղիկփունջ մը կը գնէ, սա-կայն 40 փարայի չտար այն ծաղիկը որ իւր իսկ ձեռքը հասցուցած է։

ՅՈՒՆՈՒՍԻ ԱՄՍՈՅ ՀԱՄԱՐ

Յունուարը թէ՛ շատ յարմար չէ բու-սարեւութեան, սակայն, եթէ հողագործը գիտնայ իւր հողին համար կարեւոր եղածը, կրնայ տարւոյն այս անյարմար եղանակն ալ օգտակար ընել։ Հողագործը, այս ամսուան մէջ պէտք է հերկէ, ազնուացնէ և, եթէ օդը յարմար է, մաքրէ իւր հողը քարի, փայտի կտորուանքէ և հոս ու հոն թափ-թփած օտար նիւթերէ։ ապա, պէտք է մաս առ մաս բաժնէ իւր հողը, որոշելով այն անցքերը, ուսկից ինք պիտի անցնի պէտք եղած ժամանակ։ Նթէ օդը շատ ցուրտ է և դաշտ կամ պարտէզ երթալն անկարելի, հողագործը, ժամանակը պարտաւ չանցընե-լու համար, պէտք է ձեծէ իւր ցորենը, մանրէ կանեփահատը և նորոգէ իւր գոր-ծիները ապագայ աշխատութեանց պատ-րաստ ընելու համար։ Տեղեր կան, ուր՝ հնձոց ժամանակը չանցած՝ ձմրան ստատիկ ցուրտը վրայ կը հասնի և հողագործին ժա-մանակ չտար իւր կալը ընելու։ այսպիսի տեղերու համար այս ամիսը կրնայ օգտա-կար ըլլալ։ հողագործը կրնայ իւր կալը ը-նել օդոց բարեխառնութենէն օգտուելով։ Այս ամսոյ կարեւոր աշխատութիւններէն մին ալ կենդանեաց գոմերը մաքրելն է. ձիերու և կովերու կերերը առողջանալու

աւելցընելու և յղի կամ կաթնատու կեն-դանիներուն ալ բակլայ, եգիպտացորեան, բանջար և ասոնց նման աննդարար բաներ կերցընելու է։

Բանջարեղիմաց պարտեզ. — Հողը հա-րեանցի կերպով տակն ու վրայ ընելու է, որ-պէս զի, օդոց ազդեցութիւնները ներս ալ թափանցեն։ Ամէն ժիր հողագործ, եթէ կ'ուզէ իւր ակնկալած արդիւնքը քաղել, պէտք չէ թերանայ այս որչափ պարզ նոյն-չափ ալ կարեւոր աշխատութեան մէջ։ Նո-յեմբերի մէջ ցանուած սոխի, վաղահաս ու-լունի (պիզիկա) և սոնալիի (հալիոն) ար-տերուն չուրջը — եթէ չէ բացուած մինչեւ այն տուն — չոր առաւօտ մը կանուխ՝ բա-հով փոսեր բանալու է, որպէս զի խոնաւու-թիւնը քաշուի, ցանուած հունոր չոր մը-նայ՝ այս կարեւոր աշխատութիւնն ալ պէտք չէ մոռնալ՝ զի մի գուցէ հակառակ պարա-գայն միաստերը ըլլայ։

Յունվարի վերջերն ոլոռն և բակլայ կըր-նայ ցանուիլ։ քիչ շատ պատասխարեալ և տաք տեղեր ալ կարելի է հասցընել հետե-եալ բանջարեղէններն. ընդաւոր կաղամբ (այլապալ լաճանա), սպաննախ, աղցանի խոտ, ազատգեղ, սամիթ, գինձ (քիշմիշ), ճանճուկ (բօքա), կարօս (քերիվիզ), եղերգ (հիմոխիլա), բանջար, բողի, չողգամ, սոնալի, և այլն։ ինչպէս նաև ծնեփեկ (գուշ գօմնագ) և թրթնջուկ (գուգու, գուլա-ղը) որոնք, ինչպէս յայտնի է, հողին տակ յառաջ կուգան։ Ամեն օր, արեւը մարը մոնելէ առաջ հողով ծածկելու է ծնեփեկ-ները, կարօսները, և այլն, որպէս զի ցուր-տի սաստիկ ազդեցութեան տակ չը փոխն։

Պողոց պարտեզ. — Մառերը ջրով խողա-նակելու և լուալու է, մակաբոյծ ծիւրը ջնջելու համար։ յետոյ ծեփելու է կրա-ջուրով։ Նթէ օդը շատ ցուրտ չէ, ծիրանին, սալորենին, տանձենին, կեռասենին և ա-սոնց նման ցուրտի դիմացող ծառերը կըր-նան հատուիլ (պուտամագ)։ Այս ամսոյ մէջ նոր ծառերու տունկեր ալ կրնան տնկուիլ։ լոյս որովհետև հովի գորաւոր փշեղն կը շարժին անոնք, պէտք է որ մէկ մէկ նե-ցուկ-փայտերու կապուին։ հակառակ պա-րագային՝ կրնայ ըլլալ որ արմատ չը բըռ-նեն։ Նորատունկերու արմատները աղբով կամ չոր տերեւներով ծածկելու է։ այս աշխատութիւնը միւս ծառերուն համար ալ կրնայ օգտակար ըլլալ։

Մաղկանց պարտեզ. — Այս ամսոյ մէջ ա-ռանց արհեստական ջերմութեան, կարելի չէ ծաղիկ յառաջ բերել։ ձիւնը կարծես իրեն յատկացուցած է ծաղկանց աճման այդ իրաւունքը։ Մանուշակի, արքայածաղիկ և ասոնց նման գարնան մէջ բացուելիք ծա-ղիկներու հունտերը կրնան ցանուիլ։

Յ. Մ. ԱՅՆԱԿՈՐԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մալաթիոյ Հիւանիմանսուր դաւա-ռակին շրջակայ կիսավի և Բախթէ ա-նուն տեղերու Աշիքէթներու միջև տի-րող անհամաձայնութեան յառաջ եկած թշնամութիւնները բաւալու համար, այդ երկու վայրերու մէջտեղ պահակա-

նոց մը շինուած է՝ հանդերձ յարակից չէնքերով:

— Ի Պէյքօզ կտուցեալ Համիտիյէ թղթի գործարանը բացուեցաւ:

— Տ. Ազարեան Պատրիարք Հռոմ ուղեւորեցաւ, ներկայ գտնուելու Լէօն ԺԳ. Պապին եպիսկոպոսութեան յիսնամեայ յորելեանին: Իւր հետ տարաւ ականակուռ ընչատուփ մը՝ առ Ս. Պապն նուիրուած Վեհ. Սուլթանին կողմանէ:

— Յոյն վարժարանաց խնդրոյն վերջնականապէս կարգադրուած լինելը Բ. Դոնէն ծանուցուած է Յունաց պատրիարքարանին: Արտօնուած է որ մայրաքաղաքիս մէջ գտնուած 78 վարժարանք, ինչպէս և դաւառաց վարժարանք գտնուին Պատրիարքարանի վարչութեան ներքեւ, պայմանաւ որ յետ այսորիկ մինչև որ կայսերական կառավարութեան արտօնութիւն չառնուի, նոր վարժարան չը բացուի:

— Թուրքիոյ ընդհանուր աշխարհացոյցն սկսած է պատրաստուիլ Հանրօգուտ Շինութեանց վարչութեանէն:

— 20,000 Պուլկար կը բնակին եղբր Ի. Կ. Պօլիս, ամենքն ալ պանդուխտ: Կ'ըզաղին կաթնալաճառութեամբ, հացագործութեամբ և այլ արհեստներով:

— Վեհ. Սուլթանն 1,000 ոսկի շնորհեց մայրաքաղաքի ու արուարձանաց աղքատաց ածուխ, խրդա, վերմակ, ֆանէլա, և ըն. բաշխելու համար ներկայ ցուրտ եղանակին մէջ:

— Կալուածական տուրքէ պարտք ունեցողներն կը հրաւիրուին հնչուս դրամով անյապաղ հատուցանել:

— Հրամայուած է որ քաղաքային պաշտօնեայք միշտ հսկողութիւն կատարեն վաշխառուներու վրայ և պահպանեն անոնց դիմելով կեղեքուող ժողովրդեան իրաւունքները:

— Թէզքէրէի Օսմանիյէներն եղծանող անձինք ըստ օրինի պիտի պատժուին:

— 3,500 ոսկույ գողութիւն մը տեղի ունեցաւ գիշեր ժամանակ՝ Սիրքէճիի կայարանին մէջ, երկաթ դրամարկները կոտորուելով: Կասկածեալներ ձերբակալուած են ու կը հարցաքննուին:

— Նիկոմիդիոյ Յունաց եկեղեցին գողեր մտնելով, 50 ոսկույ արժողութեամբ արծաթէ անօթներ գողցեր են:

— Սաստիկ ձմեռ կը տիրէ Ի. Կ. Պօլիս, իբր 20 տարիէ ի վեր չը տեսնուած եղանակաւ:

— Վան պիտի երթան ինչ ինչ քրննութեանց համար՝ Պետական խորհրդոյ անդամներէն Պազը պէյ և այլք:

— Մարդուանի Ամբրիկեան վարժարանը հրոյ ճարակ եղեր է:

— 20,000 ոսկի բացով իւր վճարքը զադրեցուց Ղալաթիոյ դրամատուն մը, Անկէլիտէս և Ղարալամպիտիս, որ գլխաւորաբար Զմիւռնիոյ հետ գործ կ'ընէր:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Իտալիոյ երեսփոխանական ժողովոյ անդամներէն Պ. Բօքքօ տի Մերպլին դատի պիտի ենթարկուի եղբր, 400000 ֆրանքի փոխարէն իւր քուէն Հռոմի պանքային տրամադրութեանը ներքեւ գնելուն համար՝ ինչպստ անոր նպաստաւոր մէկ օրինագծին:

— Ի Հունգարիա (ի բաց թողլով Խըրուաթիա) 1892 տարւոյն մէջ 195 նոր ընկերութիւնք հիմնուած են բաժնի վրայ, առեւտրական և արուեստագործական, ինչպէս՝ դրամատուն, գործարան, երկաթուղի, աւելի քան 32 միլիոն ֆիորին դրամագլխով:

— Միացեալ Նահանգաց երեսփ. ժողովը քննիչ յանձնաժողով մը պիտի կարգէ եղբր՝ քննելու համար թէ Բանամայի գործին առթիւ Ամերիկացիներ ալ կաշառք կերած են, ինչպէս կասկած յայտնած են ամերիկեան լրագիրք ոմանք:

— Սերպիոյ նախորդ Միլան թագաւորը նոր տարւոյ առաջին օրը այցելելով ի Բարիլ Նաթալի թագուհւոյն, հաշտուեր է: Կ'ըսուի թէ Ալէքսանդր թագաւոր երկու ամիս առաջ իւր կնքահօր՝ Աղեքսանդր Գ. Կայսեր դիմեր և այս հաշտութիւնը խնդրեր է, զօրացնելու համար իւր գերդաստանին դիրքն: Եւ Զարը միջնորդեր է: Նաթալի Սերպիա պիտի դառնայ, պայմանաւ որ Սքուքլինան ետ առնու իրեն դէմ արձակած արտաքսման օրէնքը:

— Ի Բարիլ, Բանամայի գործին առթիւ, զրպարտիչներու դէմ՝ օրինական ծրագիր մը խմբագրուելու վրայ է:

— Հավայի (Սանտփիչեան կղզիք) վարչութիւնը փոխուեցաւ: Կղզեցիք Միացեալ Նահանգաց հետ միացում կը խնդրեն եղբր:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Հանգուցեալ հաճի Սերովրէ էֆ. Կիւլպէնկեանի եղբայր Ազն. Սարգիս էֆ. Կիւլպէնկեան յունուար 13 ին վախճանելով, մարմինը յունվար 15 ին մեծավայելու յուզարկաւորութեամբ փոխադրուեցաւ Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցը և ի հոգ ամփոփուեցաւ իւր հարազատին քով:

Ամեն. Տ. Մեքքիսեդեկ եպիս. Մուրատեանց՝ Գատը դիւղի ազգայնոց փափաքանաց համաձայն՝ անցեալ Կիւրակէ առաւօտ Ս. Պատարագ մատոյց գիւղին եկեղեցւոյն մէջ, ի հանգիստ հոգւոյ բարեխիշատակ Կիւլպէնկեան Սարգիս էֆէնտի:

Նորին Սրբազնութիւնն նոյն օրը կատարեց նաեւ Փրկչական խաչելութեան պատկերի մը օծումը, զոր եկեղեցւոյն

նուիրած է Մեծ. Երեւում էֆ. Փափաքեան բարեպաշտ ազգայինը:

— Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը՝ 62 սենեակով և 12 խանութով չքեղ և հոյակապ պանդոկ մը կառուցանել տուեր է հոգեւոյս Տ. Յովհաննէս Պատրիարքի երբեմն գնած գետիններէ միոյն վրայ:

— Ազգ. Պատրիարքարանը տեղեկանալով որ՝ այլ և այլ գաւառներէ տըղաքներ կը զրկուին հեռաւոր քաղաքներ ազգային հաստատութեանց մէջ ընդունուելու համար, առանց սակայն նոյն հաստատութեանց պաշտօնական մարմնոց հետ կանխաւ բանակցելու և անոնց հաւանութիւնը ձեռք բերելու, և այս պատճառաւ յաճախ անկարելի կը լինի յանձնարարեալ տղայոց ընդունելութիւնը՝ կամ բաց տեղ չգտնուելուն և կամ անոնց վիճակն ընդունելութեան պայմանաց չհամապատասխանելուն համար, որով ոչ միայն պարապ տեղը ծախս կ'ընեն և ժամանակի կորուստ կ'ունենան, այլ և բեռ մը կ'ըլլան նոյն հաստատութեանց վրայ, յանձնարարած է առաջնորդաց՝ հարկ եղած հսկողութիւնն ի գործ դնել, որպէս զի առանց նախապէս բանակցելու որոց հետ որ անկ է, տղայ չզրկուի ազգային հաստատութեանց:

— Ազգ. վարչութեան կողմանէ առաջարկուեր է Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր՝ որ Երուսաղեմայ միաբաններէն Գեոր. Մամբրէ եպիս. Խարբերդ երթայ իբրեւ այցելու հովիւ, և Արժ. Վահրամ վարդապետ՝ ի Պայաղիտ միեւնոյն պաշտօնով:

— Երուսաղէմ, Ծննդեան տօներէն առաջ, Բեթլեհէմի եկեղեցւոյն մէջ աւելածութեան վէճի մը առթիւ Հայոց և Յունաց մէջ խնդիր ծագելով, տեղական կառավարութեան միջամտութեամբ խնդիրը կարգադրուեր է, և վէճին տեղի տուողներն ալ պատասխանատուութեան հրաւիրուեր են:

— Արեւելեան Մամուլի գեկտեմբերի թուոյն մէջ կը կարդամք թէ, Յակոբ էֆ. Ճէվահիրճեան՝ բարերարութեան դովանի զգացմամբ՝ 500 ոսկի նուիրած է ի Գասապա գաղոց մը կառուցանելու համար: Դպրոցին շինութիւնն սկսած է կ'ըսուի:

— Պիլէճիկի առաջնորդ ընտրուեցաւ և իւր պաշտօնատեղին գնաց Գեոր. Մովսէս Մ. վարդ. Կէօմրիւքճեան:

Պիլէճիկի վիճակը կը բաղկանայ ընդամենը 3500 տուն Հայերէ. կեդրոնն ունի 600 տուն. իսկ թիմերն են, Եօզղատ՝ 600, Եէնի-քէյ՝ 50, Թիւրքմէն՝ 350, Ասարլըլ՝ 250, Մուրատչայ՝ 800 և Զալկարա՝ 700 տուն: Այս գիւղեր 2—3 ժամու հեռաւորութիւն ունին կեդրոնէն:

— Տիկին Մատակեան կիրակնօրեայ դասարան մը հաստատեց Բերայի աղ-

ՄՇԱԿ ԼՐԱԳԻՐԸ

ջրկանց արուեստանոցի սրահին մէջ, Ծաղկոցներու վարժուհիներ պատրաստելու համար:

— Կը լսեմք թէ, Պոլսոյ կարեւոր թաղի մը վարժարանին հայ գրականութեան նորընծայ երկտասարդ-գրագէտ դասատուն, աշակերտաց գրական ոճը զարգացնելու և յղկելու նպատակաւ, պատուիրած է վիպական նիւթեր ի գիր առնուլ, և որպէս զի այդ նիւթեր լաւ համեմատ ըլլան, սիրահարական դարձուածքներ գործածել... միանգամայն պատուիրած է իրենց սիրահարական նամակներ գրել, խոստանալով որ ինքն անձամբ և խնամով սրբագրէ զանոնք:

Նոյն երկտասարդ ուսուցիչը պատուիրած է նաև օրնորդաց՝ ուշի ուշով կարդալ իւր հրատարակած բանաստեղծութեանց հուաքածոյն ամբողջագէտ, « իրաց առեալ այս ինչ այն ինչ երեսները, որոց ընթերցումը արգիլուած է աղջկանց համար »:

Աշխարհաբար հայ գրականութիւնը զարգացնելու և տոհմային բարքերն աղնուացնելու ի՞նչ գեղեցիկ և հանճարեղ միջոց:

— Պրուսայի Ուսումնասիրաց ընկերութեան Տնօրէն Ժողովոյ անդամ ընտրուելու եւ յունվ. 17ին՝ Տեառք Բարունակ Սէթեան, Գրիգորիս Սիմէշեան, Եղիսէ Հավուսեան, Մարտիկ Թէմեան, Յակոբեան Շիշմանեան, Յարութիւն Պաղտատեան, Յակոբոս Տ. Ա. հարոնեան, Յակոբ Թէոսեան, Յովակիմ Դալիօնեան, Նասիպ Եավրուեան, Տիգրան Մօրուքեան և Օննիկ Ֆիլիպէլիեան:

— Բերայի Տէր Արսէն և Մայր Եկեղեցւոյ Տէր Փիլիպպոս քահանայք շաբաթ օր փոխեցան առ Աստուած:

— Ազն. Էսաեան եղբարց մայրը, տիկին Աննա Գ. Էսաեան Արմաշու նորակերտ գաղթականաց մէջ փառաւոր աղբիւր մը շինել տուել է 100 լիւրայէն աւելի ծախսելով:

— Արժ. Տ. Արսէն Աւագ քահանայ Օհանեան «Ծաղիկ»-ի միջոցաւ շնորհակալութիւն կը յայտնէ տօքթ. Հիւնքեարպէյէնտեան էֆէնտիի՝ որ զինքն անձնուիրաբար խնամած է վերջին հիւանդութեան միջոցին, և կը շարունակէ խնամել ներկայ ապաքինման օրերու մէջ. շնորհակալութիւն կը յայտնէ նաև ի Մահմուտ փաշա պանդոկապետ Արահամ էֆէնտի փախազեանի որ նոյնպէս մարդասիրաբար որ և է խնամք չէ զլացեր իրեն:

— Երկտասարդ արուեստագէտ Սվաճեան Վահրամ էֆէնտի կը պատրաստուի ի մօտոյ նուագահանդէս մը տալ ի Բերա:

— Դեկտ. 28 թուով Տիգրիսէ գըր-ուած նկարագրական երկար թղթակցութենէ մը Արեւելք հետեւեալ տեղեկութիւնները կը քաղէ:

« Ռուսաց օրէնքով, խմբագրի մահուամբ, անպայման կը դադրի թերթը, մինչև որ խմբագրին ժառանգորդը՝ նոր պատասխանատու խմբագիր մը ցուցնելով՝ կառավարութեան չդիմեն և արտօնութիւն չստանան վերստին հրատարակման: Ռուսական օրէնքի առջև, հանրային մարմնոց պատասխանատուութիւն չընդունուիր: Մէկ մարդ միայն կը ճանչէ կառավարութիւնը: Մշակի խմբագիրը մեռած ըլլալով, պատասխանատու ոչ ոք մնաց, իսկ հրատարակման իրաւունքը ժառանգորդներուն անցաւ: Ուրիշ օրէնք մ'ալ կայ, որով կայքի տիրոջ մահուամբ, կնքոյ տակ կ'առնուի անոր պատկանեալ ամեն բան: Կնքը կարող է քակուիլ միայն ժառանգներուն և կառավարական ներկայացուցչին առջև:

Վախճանեալ խմբագիրն ունի երկու ժառանգ, քոյրն, ի Գիւթայիս, և եղբայրն, ի Գերմանիա: Բայց գործը կարգադրեցաւ, անոնք դեռ չեկած, և ժառանգութեան չափացած: Կաւկասեան վարչութիւնը, գնահատելով թերթին ծառայութիւնները, բացառութիւն ըրաւ: Խմբագրին մահուան հետեւեալ օրը, Դեկտ. 20ին, Տիգրիսի կառավարիչ իշխ. Շիրվաչիծէն կ'երթայ թերթին խմբագրատունն, և կ'ավկասիոյ կառավարչապետին կողմէ կը յայտնէ հանգուցելոյն կենակցող տիկին Գոչարեանի (ծնեալ Մ. Մէլիք-Աղամալեանց) թէ կարող է թերթն հրատարակել՝ առանց սպասելու ժառանգներուն թոյլտուութեան, միայն ցանկալի է որ նոյն ոգւով և ուղղութեամբ շարունակուի: Եւ ահա դուրս եկաւ թերթին նոր համարն այս տիկնոջ հրատարակութեամբ և Յ. Տէր Մարկոսեանցի խմբագրութեամբ: Այս անձ հանգուցելոյն օրով թերթին փորձերու սրբագրիչն էր, այսուհետեւ փոխ-խմբագիր պիտի ըլլայ, իսկ վճարեալ խմբագիր պիտի ճանչցուի Պ. Խաչատուր Մալումեանց, որ ժամանակաւ օրաթերթ Մալախի մէջ քանի մը նամակներ հրատարակած է Շաւշագրամ անորագրութեամբ: Այսու հանդերձ, բարեկամք և հակառակորդք կ'ըսեն միահամուռ թէ Մշակն Արժրունին էր և Արժրունին Մշակ էր:

« Անցեալ օր խոսուի էի վրացի դատաւոր Ծինամոյնարովի հետ՝ հանգուցելոյն մասին: Նա մի հետաքրքիր դէպք պատմեց: Իրր երկու տարի յառաջ տօնում էին Մշակի յօրեւեանը, Վրացիներ կ'երթան Տիգրիսի կառավարիչ Շիրվաչիծէի մօտ, խմանալու թէ ինչո՞ւ ինքն ալ իւր ներկայութեամբ կ'աւելցնէ տօնախմբութեան շուքը: Իշ-

խան Շիրվաչիծէ, որ էութեամբ վրացի է, Ծինամոյնարովին և ուրիշներուն ցոյց կուտայ ներքին գործոց նախարար Գ. Տուրնովոյի հիւազիրն, որով կը պատուիրէր ամենայն հնարաւոր օգնութիւն ընձեռել այդ յօրեւեանին, որ համաձայն է ուրա գաղափարներին: »

Ա Ր Ժ Է Ք Դ Բ Ա Մ Ո Յ

Օսմ. լիւրան 100 շըշ էն

Մէծիտիյէ	108 22	Վեցնոց	101 10
Քառորդ մէծիտ	107 10	Ռուսիոյ Բօլ	90
Մանր մէծիտ	103 10	Նարոյէոն	88
Մէծալիք	96 20	Գրիմից	51 12
Հինգնոց	101 10	Անգլ. լիւրա	110 6

Մանէթ թղթագրամ 8 79

Գօնադիտէ	24 15	Ռուս. երկ. բաժին	92 75
Թափիլ. Օսմ.	83 20	Թափիլիյէ	20

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ԾԱՂԻԿ»

Յ. Ք. ի Պալագիտ. — 90 փարա կը պարտիմք Ձեզ:

Ս. Յ. Ե. ի Խարբերդ, Մեզրա'ա. — 15 շըշ: կը պարտիմք, հաճեցէք զրկել:

Բ. Ա. ի Մարգուան. — Ղրկեցէք. յարմար առթիւ կը հրատարակուին:

Տ. Գ. ի Զմիւռնիս, Մ. Ե. ի Մաղնիսա, Մ. Գ. Ա. ի Հալիպ. — Շնորհակալութիւն Մաղիկի մասին Ձեր յայտնած համակրական զգացումներու համար:

Մ. Գ. Ա. ի Հալիպ. — Տեղւոյդ բաժանորդաց վերջին մի քանի թիւերը զրկուած են Կ. Գ. ի հասցէին. անոր հարցուցէք Ձեր պակաս թիւերը: «Ծաղիկ»-ի տեղւոյդ բաժանորդաց ցանկին մէջ Ս. Ա. ի անունը չը կայ և մենք այդ անձին ամենեւին թերթ զրկած չեմք, մինչ դուք կ'ըսէք թէ բաժանորդագիրը կանխիկ զրկած է և թերթերը շատ անկանոն կ'ընդունի: մի գուցէ այս տեղ յանձնարարուած անձը ձեռքէ մի քանի թիւեր տուած զրկած լինի՝ առանց բաժանորդագիրը մեզ յանձնելու: Կ'արժէ ստուգել այս կէտը, վասն զի այսպէս ընողներ կան: Պահանջեցէք իրմէ մեր ընկալագիրը:

Ս. Գ. Ք. ի Զարլամպա. — Ծաղիկի տեղւոյդ բաժանորդաց ցանկին մէջ Ձեր յիշած Պ. Փ. ի անունը չը կայ և ոչ ալ որ և է գըրութիւն ստացած եմք իրմէ: Ե՞րբ բաժանորդ եղած է և որո՞ւ յանձնարարած է բաժնեգիրը վճարել մեզ:

Մ. Մ. ի Ֆօքլան. — Նոյն տեղեկութիւնն ուրիշ աղբիւրէ առած և հրատարակած է: Ինք արդէն, այդ պատճառաւ Ձեր գրածը չը հրատարակուեցաւ:

ԼՈՒԾՈՒՄՆ 3Դ ՀԱՆԵԼՈՒԿ

Մարդը 15 խնձոր կը քաղէ պարտիզէն։ Առաջին դռնէն անցած պահուն, ըստ պայմանին, իւր ունեցած խնձորներուն կէսը, և առանց ունէ գործիքով կտրելու, կէս խնձոր ևս, այսինքն ընդամենը 8 խնձոր կը թողու, և իւր քով կը մնայ 7 խնձոր։

Երկրորդ դռնէն անցած պահուն, իւր քով մնացած 7 խնձորին կէսը և կէս խնձոր ևս առանց կտրելու, այսինքն ընդամենը 4 խնձոր կը թողու, և իւր քով կը մնայ 3 խնձոր։

Երրորդ դռնէն անցած պահուն, իւր քով մնացած 3 խնձորին կէսը և առանց կտրելու կէս խնձոր ևս, այսինքն ընդամենը 3 խնձոր կը թողու և քովը կը մնայ 1 խնձոր։

Առաջին անգամ ճիշդ լուծողն է Եղգիկի բաժանորդներէն Արամ Կիւմիւշեան, որ կ'առանայ խոտացեալ նուէրը։

Ճիշդ լուծեցին նաև՝

Շմիրիկ, Արշակ Ղազարոս Զէյպեան, Յ. Տէր-Յակոբեան, Հրանտ Համամեան, Կ. Մկրտիչեան, Գրիգոր Տէր-Գարեթեան, Համբարձում Խորասան-ճեան, Մկրտիչ Տէր-Աթանասեան, Պօղոս Ասլանեան, Սեդրաք Մարտիրոսեան, Օննիկ Արզումանեան, Կարապետ Համմեան, Մկրտիչ Փիւսկիւշեան, Միհրան Գ. Զեթեան, Պարթև Մարտիրոսեան, Արտաշէս Միսաքեան, Գեորգ Հրէշտակեան, Գալուստ Տէր-Յակոբեան, Գոնեայէն՝ Սողոմոն Նեվէճէիւն։

Ինչպէս հրատարակեցիք, Յովհ. էֆ. Տէր-Յակոբեան չա՜նած էր 2րդ հանելուկին համար խոտացեալ թուրք-Գաղղ. բառագիրքը։ Տէր-Յակոբեան էֆ. խմբագրութեան տրամադրութեան ներքե թողած լինելով զայն՝ իւր կողմանէ նուիրելու համար ուսանողի մը, կը նուիրեմք Մաղնիսայի Լուսաւորչեան վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտներէն Պ. Թադէոր Պալեանի՝ որ նոյնպէս լուծած էր նոյն հանելուկը։

2րդ հանելուկին ճիշդ լուծումը զրկած է նաև Արշակ էֆ. Սընդգճեան՝ թարսուսէն։

4Դ ՀԱՆԵԼՈՒԿ

1. — 45 45 հանեցի, նորէն 45 քնաց. ինչպէս ըրի։
2. — Ի՞նչ է այն, որ կայ և մարմին չունի. կը լըսէ և ականջ չունի. կը խօսի և բերան չունի։

Յ. Մ. ԱԶՆԱՌԵԱՆ

Սոյն երկու հանելուկները առաջին անգամ ճիշդ լուծողին պիտի նուիրեմք Ս. Գալուստեանի բառագիրք մը, եթէ Եղգիկի բաժանորդ է։

ԾԱՂԻԿ ԳՐԱՍԵՆԵԿԻՆ ՄԷՁ ԿԸ ԾԱԽՈՒԻՆ

ՄԱԼԻԻՄԱԹԸ ՄԻԻՖԻՏԷ. — Դիրք թուրքերէն ընթերցանութեան. 2 զրէ։

ԳՕՆԹ-Է-ՓԱՐԱՊՕԼ. — Գաղղիերէն համանուն գիրքը նոյնութեամբ տպուած. գրքին ետեւը բառգրիկով մը աւելցուած է թրքերէնով. մեր ազգային վարժարանաց մէջ կրնայ մուտ գտնել իբրև դասագիրք ընթերցանութեան և թարգմանութեան ֆրանսերէնէ ի թուրք. նոյնպէս ունեց համար՝ որք սոյն երկու լեզուներն ի միասին ուսանելու փափաքն ու պէտքը կ'զգան, այս գիրքը շատ օգտակար կրնայ լինիլ։ Գին 3 զրէ։

ՄԻՐԱԹ-ԻԼ-ԻՊԷՐ. — Ընդհ. ազգաց պատմութիւն է այս ընդարձակ և պատկառելի հեղինակութիւնը։ Հեղինակը, հռչակաւոր պատմագէտ։ Տիրապէքիցի Սայիտ փաշա, իւր այս գլուխ գործոցը գրած է այնպիսի անկողմնակալ ոճով մը, որու նման դժուար է գտնել Եւրոպացի շատ մը պատմագիրաց գրեանց մէջ։ Ինն ստուար հատորներէ կը բաղկանայ, լեզուն պարզ և դիւրահասկանալի է։ Գինը 90 զրէ։

ԹԱԼԻՄԻ ՔԻԹԱՊԷԹ ՎԷ ՄԻԻՖԷՄԱԼ, ԻՆՇԱ. — Նշանաւոր գրագէտ Բէշատ պէյի այս ընտիր գործը գրուած է բոլորովին նոր ոճով, և ուրիշ կարգ մը լինչանքներու մէջ գտնուած հին և այլ ևս անգործածական ոճերու փոխարէն՝ կը պարունակէ պաշտօնական և ոչ-պաշտօնական ամէն տեսակ գրութիւններ, շնորհաւորական, միջոցարարական, յանձնարարական, առեւտրական և ընտանեկան նամակներ, այլևայլ պաշտօնատանց սրուած աղերսագրեր, դաշնագրեր, պարտաւորահաններ, և այլն։ Կը պարունակէ նաև նշանաւոր գրագիրաց ընտիր գրուածներէն մէկ մէկ նմուշ։ 12 զրէ։

ՕՍՄԱՆԼԻ ԹԱԼԻԻ. — Գործ նոյն հեղինակին. պարզ ոճով կը պատմէ Օսմանեան մեծագոր կայսերաց կեանքն ու գործերը. զարդարուած է իւրաքանչիւր կայսեր կենդանագրով։ Գին 5 դաշեկան։

ՄԷՃՄՈՒԱՅԻ ԹԱՊԻՐԱԹԸ ԲԷՄՄԻՅԷ. — Կառավարական ամէն կարգի պաշտօններու գաղղիերէն և թուրքերէն համապատասխան սանունները պարունակող կարեւոր գործ մ'է։ 2 զրէ։

ԱԼԼԷԱԳ. ՄԻԻՏԷՐՐԻՍԻ. — Կրնայ ծառայել իբրև ընթերցանութեան դասագիրք. կը պարունակէ ընտիր բարոյալից հատուածներ։ Գին 3 զրէ։

ԲԵՏԻԱՄԱԻ զրապ վէ քերճմէ, ի Պետրոս Կարապետեանէ, 1 1/2 զրէ։

Ինսի իմլա, եսխոս Տօղրու եղբայր ուսուցիչ, Պ. Կարապետեան, 3 զրէ։

ՄԷՂԳ, եսխոս խոթութիւն Օսմանի (5

տետրէ բաղկացեալ). Պ. Կարապետեան. հատը 30 փարա։

Օսմանեան լեզուի Նոր Գրական. Պ. Կարապետեան. 50 փարա։

Հիմնական ճոր եղանակ Ֆրանսերէն Շարադութեան. Յ. Թ. Հինտլեան. Ա. տարի՝ 6 զրէ. — Բ. տարի՝ 5 զրէ։

Անգղիերէն լեզուի Գրականութիւն, Տեաական և Գործնական. Յ. Մանդակունի. 3 զրէ։

Անգղիերէն ընթերցանութեան բանալի. Յ. Թ. Հինտլեան. 3 զրէ։

Մեռեալ կիւնք. հեղինակ Օթթալ Ֆէյեէ. Թարգ. Մ. Թեւեան. 10 զրէ։

Փոնջ գիտական. Տօղթ. Կ. Յ. Փաշայեան. 5 զրէ։

Ամուսնական առողջապահութիւն. Տօղթ. Է. Քէման. Թարգ. Յակոբ Սիսակ. 5 զրէ։

Տօնացոյց. Բանաստեղծութիւն Տօղթ. Ալպէրթ Լոնկի. 1 զրէ։

Բնական պատմութեան Առաջին տարերք. 4 զրէ։

Թուաբանական խնդիրք. 2 զրէ։

Թուագիտութեան Նախապատրաստական Դասագիրք. Մտաւոր և Գրաւոր. Յ. Գ. Փալազեան. 3 զրէ։

Թուագիտութեան Նոր Դասագիրք. Տեական և Գործնական. Յ. Գ. Փալազեան. կը բաժնուի երեք մասերու. իւրաքանչիւր մաս 4 զրէ. Ա. և Բ. մասերն ի միասին կազմուած 7 1/2 զրէ. երեքն ի միասին կազմուած 10 զրէ։

Աղխարհագրութեան Նախապատրաստական Դասագիրք, Բ. տղագրութիւն հիմնովին բարեփոխեալ. Յ. Գ. Փալազեան. 3 զրէ։

Աղխարհագրութեան պատկերազարդ. Յ. Գ. Փալազեան. 4 զրէ։

Տեղագրութիւն Կ. Պօլսոյ և չրջակայից. Յաւելուած՝ Կ. Պօլսոյ խաներուն ցուցակը. Յ. Գ. Փալազեան, 100 փարա։

ԱՐՏՕՆԱՏԵՐ Ա. ՍԱՔԱՆԱՆ

ԳՐԱՍԵՆԵԱԿ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

Գրասենեակս կը շարունակէ՝ իւր բաղմամբ թղթակիցներու հաշուոյն՝ կատարել գնումն և վաճառումն ամէն տեսակ տեղական բերքերու և եւրոպական ապրանց։

Մասնաւոր գործառնութիւն ամէն լեզուէ և ամէն տեսակ գրքերու վրայ։ Կ'ըստանձնէ տպագրութիւնն յայտարարութեանց, առեւտրական նամակաց կամ չրջարեւրականաց, նամակագրութիւններու, այցեւորմաներու, գիրքերու, և այլն։ — Այցեւորմանք՝ մէկ կամ երկու տող՝ 100 հատը 10 զրէ. 1 զրուշ ալ փոստի ծախք։

Գնումն և առաքումն Եւրոպական և Օսմանեան ամէն տեսակ արժէթղթերու և բաղդատումներու, մասնաւորապէս Արեւելեան երկաթուղեաց բաղդատումներու։ Այս վերջնոց գիններն են. ամբողջ տոմար՝ 7 1/2 զրէ. կէս տոմար՝ 5 զրէ. քառորդը՝ 3 զրէ. դաւառներէն պէտք է զրկել նաև փոստի ծախքը։ Արեւելեան երկաթուղեաց վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ յունի 20ին։

Արեւելեան երկաթուղեաց մինչև ցարդ տեղի ունեցած վիճակահանութեանց մէջ՝ պարտաւորման մը չա՜նած կամ չչա՜նած լինելն իմանալու համար, կը բուէ գրել մեզ բաղդատման թիւն, զրկելով նաև հինգ զրուշի Օսմանեան նամակագրոյժ՝ կատարուելիք խուզարկութեանց համար։

Գրասենեակս կապակցութիւններ հաստատած լինելով մայրաքաղաքիս ամենէն ձեռնհաս փաստաբաններէն ոմանց հետ, կ'ստանձնէ նաև դաւառացոյց քլմիլի, խսիկմափի, քետղըզարը Շիրիի վարարերեալ դատերն, Ֆելվաճանի վերաբերեալ գործեր, և ըն. և ըն. « ԾԱՂԻԿ » ի ԲԱԺԱՆՈՐԴԱՅ գրական յանձնարարութիւնը կը կատարուին առանց վարձքի, իսկ ուրիշ կարգի յանձնարարութեանց համար կ'առնուի դոյլն յանձնարարողէն մը։

ՊԱՇՏՕՆ խնդրող ուսուցիչք կը հրաւիրուին գրասենեակս՝ արձանագրուելու. նաև անոնք որք ուսուցիչ կը փնտռեն վարժարանաց կամ մասնաւոր դասերու համար։

Դիմել առ Յ. Գ. ՓԱԼԱԶԱՆԵԱՆ, Կ. Պոլիս, Պահչէ-Գարու, Թաշ խան։